խեալ կայ, և ապա զինչ առնելոց էք ինձ՝ արարէք։ Եւ ապա խեղդեալ գնա ի ներքս և տարան գնա կա-խեցին ի ծառն դասելով ընդ նոսա ի տեղի իւր կնոջն, որ մի ժամաւ յառաջ առին վայր զկին սորա ըստ խնդրոյ իւրն, ի տեղն զսա կախեցին։ Եւ օրս ի դէմ գնացին վէզիրին ի մեծամեծաց և ի բռնաւորաց քա-ղաքիս։ Եւ օրս ի Պաղտենց տուին եւ ի Սէֆէրին տուին եւ այլ բազում տուն ի Ղալաթա որոնեցին զՀասան աղան։

Եւ դարձեալ օրս ԻԹ էր Փետրուարի, որ է նա-հանջ տարի։

Մարտի ամիս օր Շաբաթ։ Օրս զայմախանն ըս-տակ այրեաց և զէլ արար և բազում փորձ, և չատ ըստակ ի ծովս արկին. և ասացին՝ թէ թագաւորն էՀ քսակ առաքեաց ի տարաբխանան թէ ըստակ կտրեն։ Եւ օրս զկախեալքն ի ծառին հրաման արարին վե-րացնելոյ, և տեարք և ծանօթք նոցա բարձեալ տա-րան զմնացեալ գէշս նոցին ամենեցուն։ Ի ծառն յայն Թ մարդ կախեցաւ եւ ի դիմացն նոցին Աբտուլան՝ պարմախն ի վայր մի կտոր ոսկր և Խալիճ օղլին՝ ի յէտիղուլան. չաւուշպաշին եւ Մուլքին, Պիլալն և Շապանն չը կտրատեցին, քանզի ամբոխն ցրուեալ էր յաւուրսն որ զսոքա գտին, և Խալիճ օղլին որ ի տեղն չէր։ Եւ օրս այլ մարդիք գնացին ի դէմ վէզիրին։ Երեկոյիս Եղիազար վարդապետն դաս ասաց. ի Սուրբ Նիկողոս էաք և մեք։

Բ-ին օր Կիրակի Անառակի։ Գնացաք ի ժամս. Այսօր անճառ որ ըսկսաք, նա՛ մի չարժ եղև խիստ և մի ցած. եւ Վարդապետն դաս ասաց Գ ժամ։ Օրս Ցարուլթենի կողմքն ի յԱստուածածին զաթոռակալքն և զերեսփոխանն և զայլսն փոխեցին և իւրեանց կող-մանցն եդին։ Եւ Ղալաթու իշխանքն եկին ի Վարդա-